ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2014 թվական N 108-Ա

ՆԵԼԼԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետով, **ո ր ո շ ու մ եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 68-2.3-26) Նելլի Մովսիսյանին շնորհել իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2. Ն. Մովսիսյանի հիմնական աշխատավարձի նկատմամբ սահմանել 5 տոկոս հավելավճար:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ. հուլիսի 1-ից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. հունիսի 30
ք. Կապան